# Արձանագրություն թիվ 2
## «ԵՔԼ ԲԸԱՊՁԲ 16/3» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02 Փետրվարի 2016թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մելքումովա, Ա. Անանյան;
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մինասյան

### 1. Մրցույթի հայտերի բացման մասին

---------------------------------------------------------------------------

(Վ. Հարությունյան)

1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են «Երքաղլույս» ՓԲԸ կենտրոնական գրասենյակում՝ ք. Երևան, Բուզանդի 1/4 հասցեում, 2016թ-ի փետրվարի 02-ին, ժամը 12:00-ին:

2. Մրցույթի հրավերով սահմանված կարգով և դրան համապատասխան կազմված ծրարով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| | | |
|---|---|---|
| 1 | «Ալֆա էտալոն» ՍՊԸ | ք. Երևան, Տիգրան Մեծ 29ա, բն. 37, հեռ. 077 96 24 55<br>էլ. փոստ etalon.am@gmail.com |
| 2 | «էկոմիքս» ՍՊԸ | ք. Երևան, Ա. Բաբաջանյան 60/2, հեռ. 011 360 360<br>էլ. փոստ ekomixllc@gmail.com |
| 3 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | ք. Երևան, Վ, Համբարձումյան 91, հեռ. 010 323-324,<br>էլ. փոստ ciacanmarket@gmail.com |
| 4 | «Նոր էներջի» ՍՊԸ | ք. Երևան, Առաքելյան փ. 25/5, հեռ. 094 54 24 34,<br>էլ. փոստ NOR-ENERGY@mail.ru |
| 5 | «էլիտ Կաբել» ՍՊԸ | ք. Երևան, Վրացական փ. 7շ. 53 բն., հեռ. 091 41 12 41<br>էլ. փոստ armkabel@mail.ru |

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:

3. «Ալֆա էտալոն» ՍՊԸ-ի, «էկոմիքս» ՍՊԸ-ի, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի և «էլիտ Կաբել» ՍՊԸ կողմից ներկայացված հայտերում հրավերով նախատեսված փաստաթղթերն առկա են և դրանց վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված կարգին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:

4. «Նոր էներջի» ՍՊԸ-ն ընթացակարգի հայտը ներկայացրել է «ՍԱՄ» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության կարգով `կոնսորցիումով: «ԵՔԼ ԲԸԱՊՁԲ 16/3» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 2.2.12 կետով նախատեսվել է՝ եթե մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով՝ կոնսորցիումով, ապա հայտով ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագիր:

«Նոր էներջի» ՍՊԸ-ի հայտում բացակայում է համատեղ գործունեության պայմանագիրը:

Հետևաբար հանձնաժողովը առաջարկեց «Նոր էներջի» ՍՊԸ-ին ծանուցումը ստանալու հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:

5. 14-րդ չափաբաժնի մասով «Ալֆա Էտալոն» ՍՊԸ-ի և «Էլիտ Կաբել» ՍՊԸ-ի առաջարկած նվազագույն գների հավասարության պարագայում, հանձնաժողովը որոշեց՝ 14-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ «Ալֆա Էտալոն» ՍՊԸ-ին, «Էկոմիքս» ՍՊԸ-ին, «Նոր էներջի» ՍՊԸ-ին և «Էլիտ Կաբել» ՍՊԸ-ին հրավիրել բանակցությունների՝ նոր գնային առաջարկ ներկայացնելու համար: Բանակցությունների անցկացման օր սահմանել 2016թ-ի փետրվարի 04-ին, ժամը 12.00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ-ի փետրվարի 04-ին ժամը 12.00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի՝
Նախագահ _______________ Վ. Հարությունյան

Անդամներ՝ _______________ Ն. Մելքումովա

_______________ Ա. Անանյան

Քարտուղար՝ _______________ Ա. Մինասյան